ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ

Տնօրեն

ԱՈւՊ-ի մասով դպրոցի տնօրենն ապահովում է՝

- կրթության կազմակերպումը ԱՈւՊ-ի հիման վրա, եթե սովորողն ունի դրա կարիքը,
- ծնողի մասնակցությունը ԱՈւՊ-ի վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու գործընթացին,
- ծնողի ստորագրությամբ հաստատված համաձայնությունը՝ մշակված ԱՈւՊ-ն իրականացնելու համար,
- աշակերտին տրամադրվող համապատասխան մանկավարժահոգեբանական աջակցությունների ծավալները, տևողությունն ու ժամանակահատվածը,
- աշակերտի ԱՈւՊ-ի իրականացման համար անհրաժեշտ մանկավարժահոգեբանական աջակցության, հարմարեցված նյութերի և պարագաների տրամադրումը,
- ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամների մասնակցությունը տարբեր դասընթացների և վերապատրաստումների՝ զարգացնելու և ամրապնդելու նրանց մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները՝ դպրոցում ներառական կրթական գործընթացը բարելավելու նպատակով,
- սովորողի ԱՈւՊ-ի մշակման, իրականացման և գնահատման ողջ գործընթացը՝ նպատակաուղղված հասնելու նրա կրթության վերջնարդյունքներին՝ երկարաժամկետ նպատակներին: